ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ» P457-AM ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան 22 հունիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Մ. Թումասյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի հունիսի 11-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Էլեկտրոնային հասարակության եւ ինովացիոն ծրագրի նախապատրաստման համար» P457-AM կանխավճարի նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2010թ. հունիսի 17-ի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով նամակ-համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

**1.** Կանխավճարի նամակ-համաձայնագիրն ստորագրվել է 2010թ. հունիսի 11-ին, որի նպատակն է օժանդակել աջակցման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) նախապատրաստմանը, այն է՝ ա) ավելացնել այն տնային տնտեսությունների, բիզնեսների եւ հանրային կառույցների քանակը, որոնց հասանելի են ապահով եւ մատչելի համացանցը, համակարգիչները եւ էլեկտրոնային ծառայությունները, բ) ավելացնել գիտելիքի եւ տեխնոլոգիաների վրա հիմնված ոլորտի ծավալները եւ ապահովել շուկայի, ֆինանսների, հմտությունների եւ զբաղվածության ավելի լավ հասանելիություն տվյալ ոլորտում:

Նամակ-համաձայնագիրն ունի հավելված, որով սահմանվում են կանխավճարի (այսուհետ՝ կանխավճար) տրամադրման պայմանները եւ իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) նկարագրությունը: Նամակ-համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում 2008թ. հունվարի 15-ով թվագրված Ստանդարտ պայմանները:

**2.** Նամակ-համաձայնագրով Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Համաշխարհային բանկ) առաջարկում է Հայաստանի Հանրապետությանը (այսուհետ՝ Ստացող) Ծրագրի նախապատրաստման միջոցներից նամակ-համաձայնագրում եւ դրա հավելվածում ներկայացվող պայմաններով տրամադրել 3.000.000 ԱՄՆ դոլարը չգերազանցող գումարի չափով կանխավճար՝ օժանդակելու համար միջոցառումների ֆինանսավորմանը:

Իր համաձայնությունը հաստատելով՝ Ստացողը փաստում է, որ լիազորված է կնքել համաձայնագիրը եւ իրականացնել միջոցառումները, հետ վճարել կանխավճարը, նամակ-համաձայնագրի շրջանակներում իրականացնել իր մյուս պարտավորությունները:

**3.** Նամակ-համաձայնագրի հավելվածով սահմանվում են իրականացվող միջոցառումները, նախատեսվում են դրանց մոնիթորինգը եւ գնահատումը, ֆինանսական կառավարումը, գնումների ու կանխավճարի առհանման պայմանները:

Մասնավորապես, համաձայն նամակ-համաձայնագրի բաժին 3.01-ի՝ միջոցառումների շրջանակներում ապրանքների, խորհրդատվական ծառայությունների, վերապատրաստումների եւ գործառնական ծախսերի (2.300.000 ԱՄՆ դոլար), ինչպես նաեւ նամակ-համաձայնագրի բաժին 2.01 (բ)-ի՝ տրամադրվող ենթավարկերի (700.000 ԱՄՆ դոլար) համար կանխավճարի միջոցներից Ստացողը կարող է գումարներ առհանել ֆինանսավորման ենթակա ծախսերի 100%-ը՝ առանց հարկերի:

**4.** Նամակ-համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- ստեղծել Ծրագրի կազմկոմիտե, որը պետք է կազմված լինի Ծրագրի իրականացման գործում ներգրավված նախարարությունների եւ գործակալությունների ներկայացուցիչներից,

- Ծրագրի կազմկոմիտեի միջոցով նամակ-համաձայնագրի շրջանակներում միջոցառումներն իրականացնել պատշաճ հետեւողականությամբ եւ արդյունավետությամբ, Համաշխարհային բանկին ներկայացնել ապրանքների, խորհրդատվական ծառայությունների, վերապատրաստումների եւ գործառնական ծախսերի, ինչպես նաեւ կանխավճարի միջոցների օգտագործման վերաբերյալ ողջ տեղեկատվությունը,

- կանխավճարի միջոցների հաշվին ֆինանսավորման ենթակա ապրանքներ, աշխատանքներ եւ ծառայություններ ձեռք բերելիս ղեկավարվել նամակ-համաձայնագրի հավելվածի դրույթներով՝ նախատեսված Համաշխարհային բանկի կողմից մշակված Գնումների ուղեցույցով,

- համաձայնագրի հավելվածի բաժին 3.01-ի աղյուսակի Կատեգորիա 2-ում ներկայացվող կանխավճարի միջոցների մի մասը տրամադրել Համաշխարհային բանկի հետ սերտ համագործակցությամբ ընտրված ֆինանսական կազմակերպություններին (այսուհետ՝ ՄՖԿ-ներ)՝ ՀՀ-ի եւ յուրաքանչյուր ՄՖԿ-ի միջեւ կնքված լրացուցիչ վարկավորման համաձայնագրերի շրջանակներում,

- աուդիտի ենթարկել ֆինանսական հաշվետվությունները կանխավճարի իրականացման ողջ ժամանակահատվածի համար, իսկ միջանկյալ, աուդիտի չենթարկված ֆինանսական հաշվետվությունները միջոցառումների համար պատրաստել եւ Համաշխարհային բանկին ներկայացնել ոչ ուշ, քան յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից 45 օր հետո կիսամյակային կտրվածքով,

- բոլոր ապրանքները եւ ծառայությունները, բացի խորհրդատվական ծառայություններից, ձեռք բերել 2004թ. մայիսին հրապարակված եւ 2006թ. հոկտեմբերին վերանայված՝ «ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԸ վարկերի շրջանակում գնումների ուղեցույցների» I բաժնի եւ նամակ-համաձայնագրի I բաժնի դրույթների համաձայն,

- բոլոր խորհրդատվական ծառայությունները ձեռք բերել 2004թ. մայիսին հրապարակված եւ 2006թ. հոկտեմբերին վերանայված՝ «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրության եւ վարձելու ուղեցույցի» I եւ IV բաժինների եւ նամակ-համաձայնագրի հավելվածի համաձայն,

- վճարել տոկոս՝ առհանված կանխավճարի մնացորդի դիմաց, որի տոկոսադրույքը պետք է հավասար լինի ԱՄՆ դոլարի համար ԼԻԲՈՐ + ֆիքսված տարբերություն: Տոկոսների գանձումն սկսվելու է կանխավճարի գումարների առհանման օրից եւ պետք է վճարվի յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ին եւ հուլիսի 1-ին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2010 թվականի հունիսի 11-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Էլեկտրոնային հասարակության եւ ինովացիոն ծրագրի նախապատրաստման համար» P457-AM կանխավճարի նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

22 հունիսի 2010 թվականի
ՍԴՈ-897